ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային պարի կարևորությունը կրթության մեջ

Կատարող՝ Ալլա Բարսեղի Մարգարյան

/անուն,ազգանուն հայրանուն/

Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց ՊՈԱԿ, Հայոց պատմություն

/դպրոց մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

/անուն,ազգանուն /

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1: Ի՞նչ է պարը 4

Գլուխ 2: Պարը երեխաների զարգացման համար 5

Պարի ֆիզիոլոգիական նշանակությունը 5

Պարի ստեղծագործական նշանակությունը 6

Պարը հաղորդակցության միջոց 6

Պարը ինքնաարտահայտության և ինքնաճանաչողության միջոց 7

Անձնական որակների կրթություն 7

Հետազոտական մաս 8

Պարի կարևորությունը դպրոցում 8

Դաս միջոցառում 9

Եզրակացություն 22

Օգտագործված գրականություն 23

Գրականություն 23

Հղումներ 23

Ազգային պարի կարևորությունը կրթության մեջ

Ներածություն

«Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը» - ասում է Կոմիտաս վարդապետը: Երեխայի դաստիրակության գործում անհրաժեշտելի կարևորություն ունի ազգային արժեքների հանդեպ վերաբերմունքը: Պարը որպես ինքանաճանաչողության միջոց նաև ֆիզիկական ակտիվության ամենաօգտակար ձև երեխայի մոտ զարգացնում է ստեղծագործական և երաժշտական լսողությունը: Պարի միջոցով երեխան կարող է ծախսել իր մեջ կուտակված էներգիան միաժամանակ ոգևորություն փոխանցելով նրան:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝ պարզելն է ազգային պարի անհրաժեշտությունը և կարևորությունը երեխայի՝ ապագա քաղաքացու աշխարհընկալման գործում: Ազգային մշակույթի ուսումնասիրումը ֆիզիկական ակտիվության մեթոդով երեխային կոգնի ամբողջացնել ու միավորել մի քանի առարկաների հանդեպ սերն ու հետաքրքրվածությունը (Ֆիզկուլտուրա, Երգ, ՆՉՊ, Տեխնոլոգիա, ՀԵՊ, Հայոց Պատմություն): Պարը երեխայի մեջ դաստիարակում է այնպիսի որակներ, ինչպիսիք են աշխատասիրությունն ու նվիրվածությունը, կազմակերպվածությունը, հանգստությունը և ներքին կարգապահությունը, կենտրոնանալու, հիշելու, դժվարությունները հաղթահարելու ունակությունը, համբերությունը և հաղթելու կամքը, ընկերասիրությունը, միասնական զգալու ունակությունը, հայրենասիրությունը: Երբ երեխաները պարում են, նրանց համար ավելի հեշտ է ընդհանուր լեզու գտնելը: Միավորում է գեղեցիկ երաժշտությունը և պարի դասի մթնոլորտը, ի մի է բերում զվարճությունն ու ուսուցչի աշխատանքը: Պարը մեր անհանգիստ ու մտահոգ կյանքում կարող է վերականգնել հոգու հրճվանքն ու կայունությունը, թուլացնել բռնության և ահաբեկության հետևանքով առաջացած լարվածությունը դպրոցներում: Բացի այդ, պարն ազատում է կաշկանդվածությունից նույնիսկ եթե երեխան համեստ է և ամաչկոտ, պարը կվերացնի բոլոր արգելքները և նրան ավելի համարձակ և ազատ կդարձնի, կոգևորի ու նոր եռանդ կտա: Պարի միջոցով երեխաները արագ կարող են ինտեգրվել անծանոթ միջավայրում: Այս ամենից ելնելով պարի անհրաժեշութունը անժխտելի է կրթական գործում:

Ներկա կրթական հմակարգում ֆիզկուլտուրա առարկայի դասավանդումը տարական դասարաններում վստահված է մասնագիտացված ուսուցչին: Պարը նույնպես

անհրաժեշտություն ունի վստահել հատուկ կրթություն կամ նվազագույն դեպքում համապատասխան վերապատրաստում անցած ուսուցչին, քանի որ այն շատ ավելի պատասխանատու և կարևոր աշխատանք է, որ տարվում է երեխաների հետ, որովհետև իր մեջ ամբողջացնում է մի քանի առարկաների հանդեպ սերը և վերաբերմունքը:

Հնարավոր խնդիրներ կարող են հանդիսանալ՝

1. Գույքային և համապատասխան պայմաններ ապահովելու հնարավորությունը:
2. Տարիքային հոգեբանական բարդույթները ու կարծրատիպերը
3. Ֆիզիկական ու նյարդային խնդիրներ՝ բժշկի կողմից հակացուցումներ ունեցող երեխաների ընդգրկումը:

Գլուխ 1: Ի՞նչ է պարը

«Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ՝ բարքն ու քաղաքակրթության աստիճանը». Կոմիտաս

Ժողովուրդների կյանքում միշտ մեծ նշանակություն է ունեցել պարարվեստը: Արվեստների մեջ ամենապահպանողականը լինելով պարը միշտ զարգացել է տվյալ ժողովրդի քաղաքակրթության աստիճանի զարգացման և կենցաղի բարեփոխման հետ զուգահեռ: Բայց կրած այդ փոփոխություններով հանդերձ մեր պարերը կրում են հազարամյակներ առաջ ստեղծած տոտեմական, էպիկական վիպական,ծիսական և այլ պարերի կնիքը և առավել ևս հոգեբանությամբ գրեթե ոչ մի փոփխություն չեն կրել: Այդպես եղել է բազում դարերի ընթացքում, նույնիսկ անկախությունը կորցրած ժամանակ հային հայ պահող հիմնական կռվաններից մեկը ազգային արվեստն է եղել, որում թերևս կարևորագույն դերը պատկանել է պարարվեստին:

Պարը հնարավորություն է տալիս երեխաներին ունենալ մարմնի ճիշտ կոորդինացիա, մկանային ճկունություն, գլխի, ձեռքերի և ոտքերի ազատ շարժունակություն: Պարը կարևոր է կեցվածքի, կառուցվածքի, մտքի, Խոսքի և ինտելեկտի համար: Պարի միջոցով երեխաների մոտ հաճախ հանդիպող հոգեբանական խնդիրները հեշտությամբ հաղթահարվում են: Այն իր ուրույն ազդեցությունն ունի երեխաների դաստիարակչական և գեղագիտական ճաշակի վրա:

Պարով զբաղվելը ոչ միայն ցանկալի է, այլև՝ առողջարար: Օրինակ՝
հին Հունաստանում պարի միջոցով բուժում էին: Այժմ էլ շատ զարգացած երկրներում

գործում են պարի թերապիայի դպրոցներ։Պարի բուժական նշանակությունը գիտականոր են ձևավորվել է 1966 թվականին ԱՄՆ-ում։

Հայկական պարի պատմություն

Հայկական ավանդույթների և, հատկապես, պարի մասին առաջինը Խոսքել է Պլուտարքոսը։ Նա վկայում էր, որ մ.թ.ա 1-ին դարում հայերը ամֆիթատրոն են կառուցել՝ կատարելով բեմական ներկայացումներ և պարեր։ Այդ ժամանակ պարողները բաժանվել են ըստ սեռի և տարիքի, և հանդես էին գալիս առանձին։ Ամեն ինչ կախված էր տոնից, ծեսից կամ պաշտամունքի առարկայից։

Պարերի մասին վկայություններ կարելի է հանդիպել նաև ժայռապատկերներում։ Քարերի վրա տեսանելի են մարդիկ՝ կենդանական գլխանոցներով և պարային շարժումներով։ Նման պատկերները ցույց են տալիս անգամ շարժման ռիթմն ու դինամիկան։ Նկատելի են քայլերը, ոտնաթաթերի դիրքը և պտույտները։
Հայկական պարերի ուսումնասիրության առանցքային ուղղություն է հանդերձանքը՝ տարազը։ Այն բացի մարդկանց կենցաղի բաղադրիչ լինելուց, հանդիսանում է նաև ազգային պարի կարևոր բաղադրիչը։ Տարազո առանձին մշակույթ է, որը պարի ժամանակ իր նշանակությամբ ծառայել է, որպես երկրորդ մեղեդի։

Յուրաքանչյուր ժողովուրդ, ստեղծելով իր ազգային պարերն ու ժամանակի ընթացքում փոխանցելով դրանք, ենաթարկել է որոշակի փոփոխությունների, սակայն պահպանվել են միայն հայկական մշակույթին բնորոշ երաժշտական և արտահայտչական տարրերը, որոնք միանգամայն տարբերվում են այլ ժողովուրդների ազգային պարատեսակներից։

Գլուխ 2: Պարը երեխաների զարգացման համար

Պարի ֆիզիոլոգիական նշանակությունը

Պարարվեստով զբաղվող երեխաները զարգացած մկանային համակարգ ունեն, կեցվածքը ճիշտ են պահում, սկոլիոզով չեն տառապում և գեղեցիկ քայլվածք ունեն։ Այնուամենայնիվ, պարը միայն կանխարգելման միջոց չէ. մշտական պրակտիկայի դեպքում դրանք նաև նպաստում են ողնաշարի հարթեցմանը։

Բացի այդ, բարելավվում է թոքերի և սրտի աշխատանքը, ուժեղանում են արյունատար անոթները, զարգանում է շարժումների համակարգումը, շարժիչ հմտությունները, ճկունությունն ու պլաստիկությունը, ֆիզիկական տոկունությունը։ Կարևոր է նշել, որ

երեխայի համար պարելը գործնականում տրավմատիկ չէ մարմնամարզության, ակրոբատիկայի և այլ մարզաձևերի համեմատ:

Երեխաները, ովքեր պարբերաբար պարում են, լավ առողջություն ունեն: Ճիշտ ընտրված ֆիզիկական ակտիվությունն ու ակտիվությունը նպաստում են.

- Մկանների բոլոր խմբերի ուժեղացում;
- Ճիշտ կեցվածքի ձևավորում;
- Տոկունության զարգացում;
- Սրտի և թոքերի աշխատանքի բարելավում, արյան անոթների ամրապնդում;
- Շարժումների համակարգման զարգացում, «մկանային հիշողություն»;
- Ճկունության և պլաստիկության զարգացում;
- Ճարպկության և ռեակցիայի արագության զարգացում:

Պարի ստեղծագործական նշանակությունը

Պարարվեստը խթանում է ստեղծագործական կարողությունների, գեղագիտական ճաշակի և արտիստիզմի զարգացումը:

Խորեոգրաֆիան նաև արդյունավետ գործիք է ձեր երաժշտական ականջը և ռիթմի զգացումը բարելավելու համար:

Պարը հաղորդակցության միջոց

Երեխաների համար պարելը հիանալի հաղորդակցման միջոց է: Եթե ձեր երեխան փակ է և ամաչկոտ, եթե նրա համար դժվար է ընդհանուր լեզու գտնել հասակակիցների հետ, անպայման գրանցվեք նրան պարային ակումբում: Ստեղծագործական, զվարճալի մթնոլորտում ձեր որդու կամ դստեր համար շատ ավելի հեշտ կլինի շփվել այլ երեխաների հետ և զարգացնել նրանց կարողությունները: Արդյունքում երեխան կդառնա ավելի համարձակ, ազատագրված ու ինքնավստահ, կազատվի բարդույթներից:

Խորեոգրաֆիայի դասերը փոքր մարդու մոտ զարգացնում են նպատակասլացություն, հաստատակամություն, հաստատակամություն: Ի վերջո, միշտ չէ, որ հնարավոր է արագ տիրապետել նոր շարժումներին: Իսկ արդյունք ստանալու համար համբերություն ու աշխատասիրություն է պետք: Երեխան դառնում է ավելի հավաքված, կարգապահ, լավանում է հիշողությունը, կենտրոնացումը:

Պարը ինքնաարտահայտության և ինքնաճանաչողության միջոց

Արվեստն ինքն ին Խոսք է ուղված հանդիսատեսին, պարի լեզվով կարելի հաղորդակցվել իսկ այդ հաղորդակցման միջոցով ինքնաարտահայտվել ու ինքնադրսևորվել:

Հայ ազգային պարերի ուսուցումը այն կարևորագույ բաղադրիչն են ազգային ինքնության ճանաչման գործում, որը անսահման սեր կհաղորդի երեխային դեպի ազգային մշակույթ:

Պարերը հիանալի գործիք են ուժեղ և ներքուստ գեղեցիկ անհատականություն ձևավորելու համար՝ համատեղելով շնորհը, երաժշտականությունը, արտիստիզմը: Հաճույք ստանալով խորեոգրաֆիայից՝ երեխան բարելավում է ոչ միայն իր մարմինն ու բնավորությունը՝ նա հարստացնում է իր ներաշխարհը:

Անձնական որակների կրթություն

Մեր ժամանակներում անցկացվել են ուսումնասիրություններ, որոնք հաստատում են, որ երեխաները, ովքեր ակտիվորեն հաճախում են պարի դասընթացներ, սովորում են շատ ավելի լավ, քան սովորական երեխաները և բոլոր առումներով առաջ են անցնում նրանցից: Բացի այդ, պարը փոքր մարդու մեջ դաստիարակում է այնպիսի որակներ, ինչպիսիք են աշխատասիրությունն ու նվիրվածությունը, կազմակերպվածությունը, հանգստությունը և ներքին կարգապահությունը, կենտրոնանալու, հիշելու, դժվարությունները հաղթահարելու ունակությունը, համբերությունը և հաղթելու կամքը, գործընկեր զգալու ունակությունը, աշխատանք: անսամբլում, մարդամոտություն և ներքին էմանսիպացիա:
Բեմադրություններն ու մրցույթները, լավ բեմադրված խորեոգրաֆիան, գեղեցիկ զգեստները կձևավորեն տղաների գեղագիտական ճաշակը:
Եվ, իհարկե, բեմադրությունների շնորհիվ պարի դասերը տղաներին տալիս են հաջողության համ՝ այսպիսի կարևոր զգացում այսօրվա աշխարհում:
Ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել, որ պարի պարապմունքները երեխային թույլ կտան ներդաշնակ զարգանալ բոլոր ուղղություններով: Ուստի ծնողները պետք է անպայման հաշվի առնեն իրենց երեխային պարարվեստի դպրոց ընդունելու հնարավորությունը:

Մարիանա Չորնովիլ

Հետազոտական մաս

Պարի կարևորությունը դպրոցում

Հայ երիտասարդի կերտման ճանապարհին անառարկելի ազդեցություն է թողնում մշակութային և արժեհամակարգային կրթությունը: Ազգային պարը լինելով մշակույթի, պատմության, հավատալիքների և հոգեկերտվածքային դաստիրակության գործիք սեր ու նորովի արդիականացումկբերի ՆՁՊ առարկայի կարևորմանը: 2012թ.-ին կայացվեց որոշում՝ որ ազգային երգն ու պարը պիտի մտնի ազգային դպրոց, 2014թ-ին ներդրվեց ազգային երգ ու պար առարկան, սկզբնական շրջանում առարկան ներդրվեց Հայաստանի Հանրապետության 13 դպրոցներում՝ որից 10ը ք. Երևանում, 3ը մարզերում: Ներկայում շատանալով դպրոցների քանակը հերթը հասավ Շիրակի մարզին, այժմ ազգային պար առարկան դասավանդվում է Շիրակի մարզի մի շարք դպրոցներում, այդ թվում՝ Գյումրու թիվ 20 հիմնական դպրոցում և Գյումրու թիվ 30 հիմնական դպրոցում, Ամասիայի միջնակարգ դպրոցում, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցում: 2019թ.ին դպրոցների մեջ կազմակերպվել է մրցույթային փառատոն, որը երեխաների մեջ սերմանել է սեր դեպի հայրենիք, մրցակցության արդյունքում երեխաների ոգևորությունը առարկայի նկատմամբ անասելի մեծ էր:

Պարն ու Մանուկը -

1. https://www.facebook.com/100003461520899/videos/2142105815914782/
2. https://www.facebook.com/100003461520899/videos/2142099172582113/
3. https://www.facebook.com/100003461520899/videos/2142120445913319/

Նայեւ նեշենք որ հետազոտության ընթացքում առընչվել ենք այն փաստի եւ անհերքելի իրողության հետ, որ Կարին ազգագրական պարի եւ նրա մասնաճյուղերի կողմից պարբերաբար անցկացվող՝ մայրաքաղաքում և մարզերում, պարի բացոթյա դասերին մասնակցում են երիտասարդության մեծ մասը, ովքեր հետաքրքրված են ազգային մշակույթով և արժեքներով:

Ուսումնասիրությունների ժամանակ նակատելի էր մասնավոր դպրոցների, հանձինս «ԱՅԲ», «Մխիթար Սեբաստացի» և «Իրական դպրոց» կրթական հաստատությունների փորձը որի արդյունքում սաների մոտ նկատվում է սովորականից բարձր ազագային ինքնագիտակցություն, հայրենասիրության զգացողություն և հայրենատիրական գիտակցություն:

Հղումներ

ԱՅԲ - https://www.youtube.com/watch?v=AM2TUUEkizE
https://www.youtube.com/watch?v=RkphjAW6hu0

Մխիթար Սեբաստացի - https://www.youtube.com/watch?v=dSGsxDxt_Ao
https://www.youtube.com/watch?v=Kyn03UkiBXk

Իրական դպրոց - https://fb.watch/eU_V46LmRY/

Դաս միջոցառում

Առարկա - Հայոց պատմություն 6-րդ դասարան, Եկեղեցու պատմություն, Երգ-երաժշտություն, Պար, Մայրենի

Նպատակ - Սովորողները կիմանան Հին հայաստանի մշակույթը բաժնից Դիցարանը թեման, կկարողանան տարբերաել հայ աստվածներին, կկարողանան պարել ազգագրական պար, բեմական խոսքի միջոցով կներկայացնեն դիցերին ու դիցուհիներին:

Միջոցառման ընթացքը

Երաժշտություն: Վահագնի ծնունդը ֆիլմից

Հեղինակ 1

Շատ դարեր առաջ մեր բնօրրանում,

Որ հին Հայաստան անունն է կրում

Քեֆ էին անում և ուրախանում

Մեր հսկա պապերն ու Աստվածները՝

Երկնի և երկրի հզոր տերերը:

Հեղինակ 2

Հացեկաց գյուղում սեղան էր բացված

Եւ Աստվածներն էին հրավիրված

Հնչում էր երգը, թնդում էր պարը

Ու բորբոքվում էր ուրախ շուրջպարը:

Պար: Աստվածածնա

«Աստվածածնա պարը» Կարնո պարանմուշներից է, Ջավախքում պահպանված ծիսական պար: Այն կապված էր հեթանոսական մայր աստվածության պաշտանմունքի մնացորդների հետ, նվիրված էր մայրության և պտղաբերության աստվածուհուն՝ Անահիտին: Պարը կատարում էին Խաղողօրհնեքի տոնին, որը նույնպես կապված էր պտղաբերության հետ: Հետագայում այս պարի կատարումը վերագրվեց Մարիամ Աստվածածնին, իսկ պարել սկսեցին միայն Աստվածածնա վերափոխման տոնին, որը կրկին համատեղվեց Խաղողօրհնեքի տոնակատարության հետ:

Խոսք 1

Առնեմ քնար ու բանբիռ

Թմբուկ շեփոր ես զորեմ

Եւ քաջության ու սիրո

Աստվածածնին գովերգեմ

Նրանց սերը հավերժական

Աստվածային ու արբշիռ

Որ դարերի մութն է ճեղքում

Որպես հզոր մի հրթիռ

Խոսք 2

Գովերգում ենք Վահագնին

Արևորդուն քաջարի

Որ քաղում էր վիշպներին

Եւ չարքերին մեր երկրի

Հեղինակ 1

Երկնէր երկին, երկնէր երկիր,

Երկնէր և ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող բոց ելանէր,

Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.

Նա հուր հեր ունէր,

Բոց ունէր մօրուս,

Եւ աչքունքն էին արեգակունք:

Խոսք 4

Փառաբանեմ դիցուհուն

Գեղեցկության եւ սիրո

Որ աստղեր են նվաճում

Թովչանքներով ու սիրով

Աստվածուհի Աստղիկին՝

Պերճ տիրուհուն Տարոնի,

Որ թովչանքներ էր Արածանու,

Աստղավարդն էր մեր երկրի

Հեղինակ 2

Այսպես 36 տարին մի անգամ

Հավաքվում էին և ուրախանում

Մոռանում մի պահ հոգսերն անհատում

Շինականները և Աստվածները

Հենց մեր սիգապանծ հզոր տերերը

Խոսք 5

Հարսանիք է սիրո տոն

Արածանու զով հովտում

Կարասներն են կարկաչում

Թմբուկներն են որոտում

Երեններ կան խորոված

Սեղաններին ոսկեհուռ

Մատվակներն են կանգնել

Գավաթներով ոսկենուռ

Խոսք 6

Գուսաններն են գովերգում

Աստղիկին ու Վահագնին

Բամբիռներն են որոտում

Արածանում գետափին

Գինարբուք է գինու երգ

Գինու շշուկ ու կարկաչ

Գինու երգն են սաղմոսում

Գուսանները գինովցած

Խոսք 7 - Վահագն

Իմ դիցուհի

Արամազդի սուրբ կամքով

Ծուտով պիտի պսակվենք

Աստվածների օրհնանքով

Խոսքվ 8 - Աստղիկ

Սուրբ է կամքը Արամազդի

Ընդունում եմ ես սիրով

Երբ որ վառվեն վարդերը

Արեգակի վառ հրով

Վարդավառի իմ տոնին

Անուշ գրկում վարդերի

Աստվածային մեր սիրո

Հարսանիքը թող լինի

Խոսք 9

Այսօր անսովոր օրն է տոնական

Հարսանիքն է մեր չքնաղ Աստղկա

Սեղանի գլխին նստել է գահին

Մեր Արամազդը նահապետը դեգ

Իսկ նրա կողքին նստել է Հայկը՝

Աղեղնաձիգը, նետաձիգը սեգ

Խոսք 10

Հարսանքահայրն է շռայլ

Հայր աստվածը գերագույն՝

Արամազդը շանթահեղ

Արարիչը իմաստուն:

Խոսք 11

Սեղանապետ է կարգել

Նա դպրապետ մեծ Տիրին

Որ շունչ տվեց ու ոգի

Մեր հինավուրց գրերին

Խոսք 12

Հարսնամայր է գթառատ

Անահիտը ոսկեմայր՝

Աստվածուհին մայրության,

Հայոց Հերան մեր պայծառ

Խոսք 13

Մառանապետ է կարգել

Ամբարների շռայլ տեր՝

Վանատուրին հացատուր

Հյուրամեծար հյուրասեր

Խոսք 14

Հուր են բխում ու լույսեր

Միհր Աստծու աչքերից

Նա հարսին է մատուցում

Աստեղային լույս անբիծ

Խոսք 15

Հարսանքույրերն են վսհեմ

Ծովահարս Նարն ու Նանեն

Դիցուհիներն հացաբույր՝

Աշորան ու Գիսանեն

Խոսք 16

Ծարժուն անհանգիստ տղան պրպտուն

Հողի Աստվածն է՝

Տափն է մեր սրուն,

Որ ընկուզաչափ ցորենն ամբարել

Յոթ հազար տարով հողին պահ տվել

Եւ սպասում է, որ նորից ցանի՝

Հայոց աշխարհը լիությամբ լցնի

Խոսք 17

Հողից գանձեր է բերում

Սանդուրամետը խոկուն

Ստորգետնյա աշխարհի տիրակալը ահարկու

Խոսք 18

Հայկ աղեղնավորն է այստեղ

Անգոյա Տորքն ու Արան

Դիցանուշներ ու դիցեր

Եւ հերոսներ հաղթական

Հայոց երկրի այրերն են

Աստվածների հետ բազմել

Բագարատն է, Սարդուրնին

Եւ անվանի շատ քաջեր

Հեղինակ 1

Արամազդն է բարձրանում պարզում գավը գինով լի

Խոսք 19 - Արամազդ

Մեր Աստղիկի կենացը,

Կենացը մեր Վահագնի

Սիրով ծփաք ու ճախրեք

Սիրով քայլեք դարեդար

Սիրով ծլեն ու ծաղկեն

Ձեր իղձերը տենչավառ

Աստվածային ձեր սիրուց

Արեգակներ թող ծնվեն

Թող զորանան զավակունք

Արծիվենրի հետ ճախրեն

Խոսք 20 - Հայկ Նահապետ

Եւ ձեր սիրո օջախից

Թող զորանա Նաիրին

Հայրենյաց հողը ծաղկի

Եւ սարսափի թշնամին

Խոսք 21 - Անահիտ դիցուհի

Յոթ զավակներ ունենաք

Բյուր թոռնիկներ, ծառնիկներ

Հզոր մնա ու շքեղ

Աստվածային գահը ձեր

Խոսք 22 - Սարդուրի

Վիշապաքաղ պաշտելի

Պարտական ենք քո բազկին

Կայծակնաշանթ քո սրին

Խոսք 22 - Բագարատ

Վիշապներից մաքրեցիր հովիտները Նաիրյան

Որքան չար կար ու չարիք մեր աշխարհից հեռացան

Խոսք 23 - Վահագն

Ով երկրատեր Արամազդ

Ով Անահիտ ոսկեմայր

Աստվածներ ու իշխաններ

Քրմեր ճորտեր մեր խոնհար.

Ով ժողովուրդ պաշտելի

Մենք ձեր հոգուց ենք ծնվել

Մենք քաջեր ենք տիտաներ

Դուք եք աստված հռչակել

Մեր երկիրը Նաիրին

Հարազատ է այնքան թանկ

Քանի մենք կանք չի լինի

Ոչ մի աղետ ու վտանգ

Խոսք 24 - Վահագն

Խոսքիր իմ սեր, սպասում են Խոսքիդ պերճ

Խոսք 25 - Աստղիկ

Ես ծնվեցի ծաղկեցի

Որ սոր բերեմ այս կյանքին

Գեղեցիկը ու բարին

Հաղթեն չարին չարիքին

Ես իմ սերն եմ ընծայում

Աստվածներին ու մարդկանց

Եւ թող սիրուց շողշողան

Բոլոր սրտերն ամպամած

Սերն է շաղախը երկրի

Սերն է իմաստը կյանքի

Կենաց շունչն է ու ոգին հողի, ջրի, կրակի...

Խոսք 26

Ոսկե թասեր են զնգում

Ոսկե գավեր որոտում

Ամեն զնգոց ու որոտ

Լույս ու սեր են ավետում

Պար: Շավալի

«Շավալին» Կարնո հին շորորաձև երգ-պար է: «Շավալին» հարսանեկան պարի մաս է կազմել և մինչ օրս հիշվում է որպես պարտադիր կատարվող հարսանեկան պար: Ոմանք նույնիսկ այն համարում են միայն հարսանեկան պար, հիշատակվում է նաև որպես խնամու պար: Ժողովրդի հուշերում պահպանված պարերգի երկու տողն այսպես է հնչում.

Հեղինակ 2

Հարսանիք թեժ պահին մի գուժակ է հայտնվում

Խոսք 27

Գույժ եմ բերել՝

Ահազանգ եմ ձեզ հայտնում

Վիշապներն են հայտնվել

Ջիլո լեռան լանջերում

Ասորեստանից են եկել

Մեր գյուղերն են ավերում

Խոսք 28

Հարսանիքը դադարեց

Քնար բանբիռ լռեցին

Արածանին մռայլվեց

Ալիքները զարթնեցին

Խոսք 29 - Արամազդ

Ի զեն ի մարտ դեպ Ջիլո

Խոսք 30 - Վահագն

Ով տիրակալ աշխարհի

Թույլ տուր կրկին ես գնամ

Պատժեմ անգութ թշնամուն

Նրանց թույնը ու փոշին

Հանձնեմ հողմին ու քամուն

Խոսք 31 - Անահիտ

Քո հարսանյաց օրն է սուրբ

Դու կմանաս հարսի հետ

Որ չտեսնի Աստղիկը

Ոչ մի փորձանք ու աղետ

Խոսք 32 - Վահագն

Ես չեմ կարող չմեկնել

Երբ թշնամին արնախում

Հողն է պղծում սրբասուրբ

Մանուկներին է մորթում

Խոսք 33

Մենք քեզ հետ ենք հարսանիքում թե մարտում

Պետք է լինենք միասին

Խոսք 34

Ձեզ բարի երթ հաղթամարտ

Բարով գնաք ու դառնաք

Ցուլեր խոհեր կզոհենք

Եւ կտոնենք հաղթանակ

Պար: Յարխուշտա

«Յարխուշտա» ռազմական խաղ-պարը պատկանում է ծափ պարերի տեսակին և առանձնանում է յուրօրինակ կառուցվածքով, խաղային, երաժշտական, բանահյուսական տեքստերով և կատարման գունեղ ոճով: «Յարխուշտա» ռազմական խաղ-պարը տարածված է եղել Սասունում: Պարի անվանումն ունեցել է տարբեր մեկնաբանություններ, որոնցից մեկն այն է, որ այն նշանակում է «զենքի ընկեր»: «Յար» պարսկերեն նշանակում է «սիրեցյալ», «ընկեր», իսկ «խըշտ», «խըշտիկ»՝ «կարճ նիզակ», «զենք»:

Հեղինակ 1

Բյուր սխրանքներ կատարեց արևորդին Նաիրյան

Չարիքներն ու չարքերը

Մեր աշխարհից չքացան

Նա հալածեց Բարշամին

Ասորեստանի Աստծուն

Որ փորձում էր նվաճել

Նաիրյան հողն ու ածուն

Խոսք 35

Կրկին ափին Արածանու

Թմբուկներն են որոտում

Ժողովուրդը Վահագնի

Հաղթանակներն է տոնում

Շարունակվում է ծեսը

Խրախճանքը դիցական

Վահագնի ու Աստղիկի հարսանիքը սրբազան

Ծեն է երկիր Նաիրին

Հզոր ամրոց անառիկ

Համերաշխ են ու խաղաղ Աստվածները ու մարդիկ

Պար: Էջմիածնի

«Էջմիածինը» Կարնո պարանմուշներից է, պատկանում է կլոր պարերի «ետ ու առաջ» տեսակին և առանձնանում է ինքնատիպությամբ և խորհրդավորությամբ:

Պարը շատ հին է: Ձեռքերը վեր պարզած բռնելու ձևը համեմատում են եկեղեցու գմբեթի հետ, սակայն այն, ըստ երևույթին, հեթանոսական ծագում ունի, և վեր պարզած ձեռքերը հիշեցնում են Զոն Արևին: Պարի կլոր հատակագիծը, բացի արևի սկավառակից, նաև կյանքի շրջանն ու տվյալ հասարակության ամբողջականությունն է խորհրդանշում: Եվ քանի որ աջը հաջողության խորհրդանիշն է, իսկ ձախը՝ ձախորդության և մահվան, ապա կարելի է եզրակացնել, որ պարի ընթացքում աջը, այսինքն՝ հաջողությունը պահվում է համայնքի, հասարակության ներսում՝ փորձելով մոգական ուժերի միջոցով համայնքին հաջողություն ապահովել, իսկ ձախը՝ ձախորդությունը, թարսությունը, ամեն քայլի հետ վանվում է համայնքից, հասարակությունից դուրս:

Խոսք 36 - Սրդուրամետ

Դրեր անցան աշխարհակալ

Քարը քարին չմնաց

Կործանվեցին գահեր փառքեր

Մութ դարերում միգապանծ

Մնաց ասքը անմահ ոգին,

Առասպելը դյուցազնական

Նրանց սիրո սխրանքի...

Խոսք 37

Փառք Արամազդին աստվածահայր Անահիտին աստվածամայր

Փառք Վահագնին հաղթաբազուկ, քույր Աստղիկին սիրանազուկ

Արեւ Միհրին լուսաճաճանչ, նայեւ Տիրին գրաճանաչ

Ծովինարին ու Նանեին

Վանատուրին Գիսանեին

Փառք հայորդաց բնօրրանին

Լեռնակղզի Արարատին

Փառ հին ցեղիս արմենական

Հայկյան բազկին կուռ զինական

Աստվածաշունչ հայոց լեզվին

Ազգահավագ հայոց գենին

Փառք մեր մտքին մեր քանքարին

Բյուրահազար մեր պայքարին

Փառք մեր վաղվա գալիք կյանքին

Փառք հավերժող հայոց փառքին:

Եզրակացություն

Այսօրվա հրամայականն է վերադառնալ արմատներին, և՛ ազգային պարը վերադարձնել ժողովրդին, վերստին դարձնել ժողովրդական: Մենք արհեստականորեն օտարեցրել ենք ազգային պարը ժողովրդից: Իսկ պարի բնականոն ընթացքը, առավել ևս զարգացումը կարելի է ենթադրել միայն այն ժողովրդին վերադարձնելու ճանապարհով:

Հետազոտությունից ելնելով կարող ենք շեշտել, թե ինչքան կարևորով է աշակերտի մեջ ազգային դաստիարակություն և դիմագիծ կերտելու համար օգտագործել ազգային պարարվեստի իր անաղարտ ու բնօրրինակ ձևով:

Ծրագրային ուսուցմամբ հնարավոր կլինի երեխային մոտեցնել ազգային մշակույթի այն արմատներին, որը մեր սերունդներին հնարավորություն կտա իմացական մակարդակով ամրանալ գիտելիքներով և աճ ապահովել կարողությունները օգտագործելով:

Օգտագործված գրականություն

Գրականություն

1. Սրբուհի Լիսիցյան՝ «Հայկական Հինավուրց Պարեր» Երևան 2013թ ՀՀ Մշակույթի նախարարություն
2. Սամվել Մարգարյան - «Աստվածային հարսանիք արածանու ափին» Երևան «Վան Արյան» 2016թ

Հղումներ

1. http://karinfolk.am/
2. https://www.armgeo.am/armenian-national-dance/
3. https://www.youtube.com/watch?v=YSpBBSeG0sQ
4. https://www.facebook.com/events/605457206623413/?ref=newsfeed
5. https://old-lib.armedu.am/resource/3337?fbclid=IwAR32j674RcHlEzTGYR15EDB44fiAhUBiC4RgFxBbH9dnKUiTiVpeQXt9P0c
6. ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանը հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաների փորձնական ծրագրերը հաստատելու և 2014-2015 ուստարում մի քանի դպրոցներում փորձարկելու մասին: